«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

20.11.2025 թ.

1. Ռեկտորատի նախորդ նիստի որոշումների կատարողականի վերաբերյալ:
   - ընդունել ի գիտություն,
2. 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ներբուհական զեղչերի վերաբերյալ
   - 2.1 ընդունել ի գիտություն և հաստատել համալսարանի կողմից զեղչերը:
   - 2.2 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտության հայցորդ **Նելլի Գևորգի Բայրամյանին** և «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտության ասպիրանտ **Պարգև Արայիկի Ղարիբյանին** տրամադրել վարձավճարների 20% զեղչ:
   - 2.3 ա. քոլեջի «Ապրանքագիտություն» (միջն. կրթ. հիմքով) 1-ին կուրսի ուսանողուհի **Լիլիթ Ավետիսյանի** ուսման վարձավճարը զեղչել 100%-ով:
   - բ. քոլեջի «Ագրոնոմիա» (հիմն. կրթ. հիմքով) 1-ին կուրսի ուսանող **Վարդան Անդրանիկի Նազարյանին** և «Ջերմատն տնտեսություն» (հիմն կրթության հիմքով) 2-րդ կուրսի ուսանող **Գրիգոր Անդրանիկի Նազարյանին** տրամադրել ուսման վարձավճարների զեղչ՝ յուրաքանչյուրին՝ 50%-ի չափով:
3. 2024-2025 ուստարում ամբիոններում ուսումնական ծանրաբեռնվածության կատարման ամփոփ արդյունքների վերաբերյալ:
   - ընդունել ի գիտություն:
4. Համալսարանում ուսումնական պարապմունքների կազմակերպման ընթացքի, խնդիրների և բարելավման ուղիների վերաբերյալ
   - 4.1 ընդունել ի գիտություն:
   - 4.2 հեռակա մագիստրատուրայի դասերը սկսելու ժամը սահմանելիս ցուցաբերել ճկուն մոտեցում՝ ելնելով տարբեր ֆակուլտետների մագիստրանտների շրջանում հարցումների արդյունքներից:
   - 4.3 ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը առցանց անցկացնելու վերաբերյալ առաջարկը ուղարկել լրացուցիչ ուսումնասիրության:
5. Հեռակա ուսուցման համակարգի 2025-2026 ուստարվա ընդունելության արդյունքների և 1-ին կուրսերի ուսումնական պարապմունքների կազմակերպման խնդիրների վերաբերյալ:
   - ընդունել ի գիտություն:
6. ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանում և Ա.Ե.Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ
   - 6.1 ընդունել ի գիտություն:

- 6.2 միաձայն հաստատել Ա.Ե.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում կուրսղեկների աշխատավարձը նախկին 20 հազար ՀՀ դրամի փոխարեն 25 հազար դրամ դարձնելու առաջարկը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. Վանաձորի մասնաճյուղի հեռակա բակալավրիատի «Պարենամթերքի տեխնոլոգիաներ» 3-րդ կուրսի ուսանող Կարեն Մերուժանի Եղիազարյանի՝ 1-ին կիսամյակի քննաշրջանին անհատական գրաֆիկով մասնակցելու թույլտվության վերաբերյալ
   - միաձայն որոշեցին հնարավորություն տալ ուսանողին՝ անհատական գրաֆիկով մասնակցելու քննաշրջանին՝ հիմք ընդունելով բժշկական համապատասխան փաստաթղթերը:
2. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի 16.10.2025թ. նիստում (արձանագրություն թիվ 6) հաստատված հարցի՝ «Ագրոմեխատրոնիկա և ճշգրիտ ռոբոտատեխնիկա» ՄԿԾ-ի ուսումնական պլանով 1-ին կիսամյակում ընդգրկված «Գծագրական երկրաչափություն» առարկայի քննությունն ավանդական եղանակով անցկացնելու վերաբերյալ
   - «Ագրոմեխատրոնիկա և ճշգրիտ ռոբոտատեխնիկա» ՄԿԾ-ի ուսումնական պլանով 1-ին կիսամյակում ընդգրկված «Գծագրական երկրաչափություն» առարկայի քննությունն ավանդական եղանակով ամբիոնում անցկացնելու փոփոխությունը՝ որպես փորձնական մոտեցում, դրական կարծիքով ուղարկել գիտական խորհրդի քննարկմանը:
3. Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Սիսիանի, Վանաձորի մասնաճյուղերի բոլոր հիմնական աշխատողներին նոյեմբեր ամսվա ընթացքում լրավճար սահմանելու վերաբերյալ.
   - միաձայն որոշեցին՝
     - ✓ 4 ամսից մինչև 6 ամիսը ներառյալ աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 50%-ի չափով,
     - ✓ 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 100% -ի չափով,
     - ✓ Վանաձորի մասնաճյուղի 4 ամսից մինչև 6 ամիսը ներառյալ աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 25%-ի չափով,
     - ✓ Վանաձորի մասնաճյուղի 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 50% -ի չափով:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. Ժ. ՄԽԵՅԱՆ